

Սևան թափվող գետերի վրա շահագործվող Փոքր ՀէԿ-երի խնդիրները

Սևանա լիճ թափվող գետերի վրա փոքր ՀէԿ-երի կառուցումն ու շահագործումը ամբողջությամբ խախտում է ՀՀ Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակների պահպանումը, ՀՀ «Սևանա լճի մասին» օրենքը, ԲՀՊՏ-ների մասին օրենքը և այլ բնապահպանական օրենքներ: Այս ՀէԿ-երի շահագործումը հանգեցրեց գետային էկոհամակարգերի խախտման, սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման և կոնֆլիկտների, կենսաբազմազանության կորստի: Ուստի առաջարկում ենք վերանայել Սևանա լիճ թափվող գետերի վրա ՓՀէԿ-երի շահագործման թույլտվությունները և արգելել շահագործումը, կամ խիստ սահմանափակել հատուկ պայմաններում շահագործումը, ինչպես նաև արգելել նոր ՓՀէԿ-երի կառուցումը Սևանա լիճ թափվող գետերի վրա:

Ներկայացնում ենք արձանագրված խնդիրներն՝ ըստ Սևան թափվող գետերի վրա տեղակայված ՓՀէԿ-երի:

«Ձորագյուղ 1» և «Ձորագյուղ 3» ՓՀէԿ-եր

- «Ձորագյուղ 1» և «Ձորագյուղ 3» ՓՀէԿ-երը կասկադային ՀէԿ-եր են, որից «Ձորագյուղ 3» փոքր ՀէԿ-ը ջրառն իրականացնում է Սևանա լճի ջրավազանի հոսքի ձևավորման տարածքներից՝ ծովի մակերևույթից 3000մ բարձրության վրա և ձնհալից առաջացած ջրհոսքերն ամբողջովին վերցվում են խողովակի մեջ: Ջրային ռեսուրսի նմանատիպ օգտագործումը հակասում է կառավարության N. 64-Ն, թվագրված 2005 թվականի հունվարի 20-ին էկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման մասին որոշմանը:

- ✓ Անհրաժեշտ է վերանայել ջրատնտեսական հաշվարկները՝ ջրային հոսքի համար սահմանված՝ 10լ/վրկ բնապահպանական ելքի չափաքանակը ավելացնելու միտումով:
- ✓ Կենցաղային կեղտաջրերի հեռացումն իրականացնել սահմանված կարգով՝ «mini» մաքրման կայանի կամ անջրթափանց հորի միջոցով՝ բացառելու համար արտահոսքը գետ:

Հոսքի ձևավորման տարածքներում /որը սահմանվում է մինչև 4000 մետր շառավղով/ ջրային ռեսուրսի օգտագործումը ՓՀէԿ-ի նպատակով հակասում է «ՋՐԱԷԿՈՂԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՋՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ

ԳՈՏԻՆԵՐԻՑԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն որոշման պահանջներին:

«Արգիչի» ՓՀԷԿ

- ՋԹ-ում ՓՀԷԿ-ի ջրառի և ջրահեռացման կետերի կոորդինատները բացակայում են:
- Արգիչի գետի վերին հոսանքում, որտեղ կառուցված է ՓՀԷԿ-ի գլխամասը, կարող են հանդիպել հետևյալ ձկնատեսակները՝ կարմրախայտ, Սևանի բեղաձուկ (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Սևանի կողակ (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Գեղարքունի (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում):
- Խողովակաշարը վթարվել է մի քանի անգամ, քանի որ ՀԷԿ-ը կառուցված է խախտումներով:

Ըստ ջրօգտագործման թույլտվության՝ «Արգիչի» ՓՀԷԿ-ը տարվա 11 ամիսների ընթացքում կարող է իրականացնել 50.1 միլիոն խմ ջրառ՝ գետում ապահովելով 1խմ/վ բնապահպանական թողք: ՓՀԷԿ-ը ջրառ չի կարող իրականացնել միայն օգոստոս ամսին: «Արգիչի» ՓՀԷԿ-ի համար ընդունված բնապահպանական թողքն ավելին է, քան նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: Ջրօգտագործման թույլտվությամբ այս ՓՀԷԿ-ին թույլ է տրված փետրվար, մարտ, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր ու նոյեմբեր ամիսներին ավելի շատ ջուր վերցնել գետից, քան այնտեղ մնում է բնապահպանական թողքից հետո, այն էլ գետի բազմամյա միջին հոսքի (50% ապահովվածության) ցուցանիշերի նկատմամբ: Դա նշանակում է, որ ՓՀԷԿ-ին թույլ է տրված օգտագործել բնապահպանական թողքի ջրերը:

- Համապատասխան բնապահպանական մարմնի կողմից կնքված ջրաչափ ջրառում չկա:
Կայանում տեղադրված ագրեգատների արդյունավետությունը կասկածելի է, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, պատճառ է դառնում սահմանված բնապահպանական թողքի ծավալների չպահպանելուն: Հիդրոլոգիական տվյալները ոչ հավաստի են, ինչի պատճառով ազդակիր համայնքներում առաջացել է ոռոգման ջրի պակաս:

«Մարտունի» ՓՀԷԿ

- ՋԹ-ում ՓՀԷԿ-ի ջրառի և ջրահեռացման կետերի կոորդինատները չեն համապատասխանում իրական կոորդինատներին:
- «Մարտունի» ՓՀԷԿ-ի գլխամասում առկա է բետոնե կիսալաբիրիինթոսային ձկնանցարան: Ձկնանցարանն ընդհանուր առմամբ կարող է նպաստել

սաղմոնազգիների գաղթն իրականացանելու համար, սակայն նրա ամենաստորին աստիճանը կառուցված է գլանաքարերի վրա և ունի մոտ 60 սմ բարձրություն, ինչը լրացուցիչ արգելք է իշխանի գաղթի ճանապարհին:

- Մարտունի գետի վերին հոսանքում, որտեղ կառուցված է ՓՀԷԿ-ի գլխամասը, կարող են հանդիպել Գեղարքունին (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), կարմրախայտը: Հնարավոր է, որ այստեղ բարձրանա նաև Սևանի կողակը և Սևանի բեղաձուկը (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), ինչը քիչ հավանական է:
- Այս ՓՀԷԿ-ին սակավաջուր տարիներին թույլ է տրված տարվա բոլոր ամիսներին ավելի շատ ջուր վերցնել գետից, քան այնտեղ մնում է բնապահպանական թողքից հետո: Դա նշանակում է, որ ընկերությանը թույլ է տրված օգտագործել բնապահպանական թողքի ջրերը:
- Համապատասխան բնապահպանական մարմնի կողմից կնքված ջրաչափ ջրառում չկա:
- Ջրառի ու բնապահպանական թողքի ավտոմատ կառավարում ու հաշվառում ապահովված չէ:

Քանի որ Սևանա լճից ձկները ձվադրաման նպատակով բարձրանում են Մարտունի գետի այս հատված, այս ՓՀԷԿ-ի բոլոր կառույցները և գետի բնապահպանական թողքի չափաքանակը պետք է այնպիսին լինեն, որ ոչ մի կերպ չխոչընդոտեն ձկների բնականոն տեղաշարժը: Եթե դա անհնար է ապահովել, ապա պետք է ապամոնտաժել այս և Սևանի ավազանի գետերի վրա կառուցված մնացած բոլոր ՓՀԷԿ-երը: Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-երի համար պետք սահմանվի հատուկ ռեժիմ, ելնելով ձկնաշխարհի պահպանության ու ձկների բազմացման պայմանների ու պոպուլյացիայի արհեստական համալրման անհրաժեշտությունից:

«Վարդենիկ» ՓՀԷԿ

- ՋԹ-ում ՓՀԷԿ-ի ջրառի և ջրահեռացման կետերի կոորդինատները նշված չեն:
- Ջրընդունիչ հանգույցում կառուցվածքների տեխնիկական լուծումները չեն համապատասխանում նախագծային լուծումներին:
- Վարդենիկ գետի վերին հոսանքում, որտեղ կառուցված է ՓՀԷԿ-ի գլխամասը, կարող են հանդիպել հետևյալ ձկնատեսակները՝ կարմրախայտ, Սևանի կողակ (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Սևանի իշխան (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում): Հնարավոր է, որ այստեղ բարձրանա նաև Սևանի բեղաձուկը (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում): Բացառված չէ նաև

Ճիաճանախայտի առկայությունը, որին աճեցնում են այս գետի հարևանությամբ գտնվող լճակներում:

Ջրառի ամբարտակը կառուցված է նախագծային շեղումներով՝ 2 զուգահեռ, անհարկի խորը պարզարաններով: Այս ՓՀԷԿ-ում նույնպես առկա է բոլոր ՓՀԷԿ-երում տիրող իրավիճակը. ջրառի կետում չի չափվում ինչպես բնապահպանական թողքը, այնպես էլ ջրառի ծավալը, որի մեծության որոշման հիմք հանդիսացող հիդրոլոգիական տվյալները հավաստի չեն:

Ինգա Զարաֆյան
«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ նախագահ
ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ 3-րդ Աշխատանքային խմբի անդամ

Սույն հիմնավարումը ներկայացվել ու քննարկվել է «Քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական հարցերում որոշումների կայացման գործում» 3-րդ ԱԽ աշխատաժողովին (սեպտեմբեր 25-26, 2021թ., Լճաշեն):

Միջոցառումն իրականացվում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում: